ԹԻՎ 32 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«02» ապրիլի 2024 թվական
ք.Գյումրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ԱԽՈՒՐՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի ավագանու անդամ Էդգար Մանվելի Խաչատրյանի լիազորությունները դադարեցնելու մասին» թիվ 12 արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 32 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է.

Ախուրյան համայնքի ավագանու «Ախուրյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Ախուրյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Վարազդատ Հրաչյայի Թորոյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մարգարյան

Նախագահի տեղակալ՝ Ն. Էլբակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան

Անդամներ՝ Ս. Ստեփանյան
Գ. Բիչախչյան
Ա. Հակոբյան

Կ.Տ
ԸՀ N32